Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՔՅԱՎԱՌ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ի և <<<ՀԻՊԵՐՆՈՎԱ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի՝ <<ՔՅԱՎԱՌ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ին և <<<ՀԻՊԵՐՆՈՎԱ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 29-ի թիվ 799-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am